ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

21-ը հունիսի 2023թ.

Շնորհավորական ուղերձ
Բուժաշխատողի մասնագիտական օրվա կապակցությամբ

Առողջապահական ոլորտի հարգելի՛ աշխատակիցներ, հարգարժա՛ն բժիշկներ.

Բուժաշխատողի օրվա կապակցությամբ շնորհավորում եմ բոլորիդ: Բժշկի մասնագիտությունը մեծ առաքելություն է, որը պահանջում է ոչ միայն մասնագիտական գերազանց հմտություններ, այլև անսահման մարդասիրություն, համբերատար ու սրտացավ վերաբերմունք յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ:

Մեր հասարակության մեջ իրենց կոչմանն արժանի բուժաշխատողները միշտ էլ առանձնահատուկ համբավ են վայելել. անգնահատելի է հատկապես բախտորոշ ժամանակներում, պատերազմական և հետպատերազմյան շրջանում մեր բժիշկների հոգատար ծառայությունը: Բարդ ու հաջող վիրահատությունների, կյանքեր փրկելու մասին պատմությունները բազմաթիվ են, որոնք բուժաշխատողների պրոֆեսիոնալ ու նվիրված աշխատանքի խոսուն վկայությունն են:

Առողջապահական ոլորտի հարգելի՛ ներկայացուցիչներ.

Հասարակության առողջ կենսագործունեությունը զգալիորեն կապված է ձեր սրտացավ ու հմուտ աշխատանքից, ուստի այսչափ պատասխանատու ոլորտում մաղթում եմ՝ միշտ հաջողեք: Մասնագիտական տոնի առիթով կրկին շնորհավորում եմ բոլորիդ և ցանկանում՝ քաջառողջություն, անսպառ եռանդ և բարեհաջող գործունեություն բժշկության ոլորտում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**